

Հմմտ. — Իրրեւ զայն լսէր Պարթեւն՝ գերդումն ուխտին յիշէր... եւ վատ խորհուրդ ի միտ արկանէր. առնոյր զթագաւորն մեկուսի նա եւ եղբայր իւր հարազատ՝ իրրեւ ի պատճառս ինչ զքօսանաց, իրրեւ խորհուրդ ինչ խորհել ընդ նմա. եւ զսուսերսն պողովատիկս թերաքամեալս ունէին. յանկարծ յեղակարծումն ժամանակի զէնս վերացուցեալ՝ ըզթագաւորն դիաթաւալկացուցեալ յերկիր կործանէին: Անդուստ ուստեմն իրազգած եղեալ իրացն որ եղեն՝ զոյժ աղալակի ամբոխին թանծրանայր. մինչ այս մինչ այն՝ նորա հեծեալ յուրաքանչիւր երիվարս փախստական լինէին. — Ագաթ., յօդ. 32:

33. — Եւ կարգէին թագաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս տալ, ընծայս եւ պատարագս. սոյնպէս եւ մարգպանին Սուրենա հասա եւ կօթիս եւ զպիտոյս գլոճկացն. — Ե. լը, 310:

34. — Ագա իրրեւ ոչ հաւանեցաւ նա ընդ կաճանին երթալ, մորակ ի վեր առեալ Մանուէլի՝ տանջէր զմերկ գլուխ Արտաւազդայ. — Ե. խգ, 316:

Հմմտ. — Ամենայն ոք ձեռն ի գործ արկեալ, եւ կանանոյն անգամ սատարեալ ըստ իւրեանց տկարութեան կանացի ուժոյն. — Ագաթ., յօդ. 758:

35. — Այս ինծ կօթիկ լիցին, փոխանակ զի երէց արարի գրեզ: ... Ասէ ցկին իւր եւ ցընտանիս. Արիք յաղօթս կամք: Եւ նորա ասն. Մոյիս դու, դեւ ուրեմն հաւալ ի քեզ. — Զ. Բ, 336:

Հմմտ. — Արդ՝ իրրեւ լուան մարդիկն՝ սկսան ծիծաղել զբանիքն զոր սաաց. սկսան խօսել ընդ նմա եւ ասն. Եւ դու ուրեմն մոլեղեցար, դեւ ուրեմն հաւալ ի քեզ. — Ագաթ., յօդ. 216:

Այս հակիրճ նմոյշները կրնան բաւական համարուիլ հաստատելու թէ Դ. Դարու Հայ վիպասանները կը գործածէին, ժողովրդական ստոյթներով համեմուած, առոյգ, ճկուն եւ պիղծ լեզու մը: Փաւստոսի Հայոց Պատմութիւնը մէկ կողմից տակ ներփակուած կը ներկայացնէ մեզի Դ. Դարու մեր վիպասաններուն հայաբոյր բարբառք, եւ Ե. Դարու մեծ մատենագիր Կորիւն Վարդապետի շքեղ, յորդ ու փարթամ լեզուն:

Ն. ԱՐԲ. ՇՈՎԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՍԱՂԻՄԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ

(1743 Մարտ 10 — 14 Հոկտ. 1745)

Թվին ՌՃՂԲ [= 1743], ի Սր. Քաղաքս յերուսաղէմ, մեր վանաց պարիսպն, յարեմտեան կողմն ինքն յինքեան ի փուլ եկն, ի սեղանատան կամարէն մինչեւ ցմեծ դուռն, մարտի ամսոյ ժ., եւ այս վասն այն եղեւ, զի ձմեռն սաստիկ անձրեւոտ էր. զի գրեթէ չ'օր աւելի զցայկ եւ զցորեկ ոչ դադարեցաւ անձրեւն գալոյ, եւ պարիսպն ի վաղ ժամանակէ շինեալ, քանզի յոյժ հնացեալ, եւ տեղիս տեղիս խաղաւաղ եւ քայքայեալ, Եւ այս եղեւ ի թաղաւորութեան տաճկոց սուլթան Մահմուտին, եւ ի պատրիարքութեանն սրբոյ եւ մեծի Աթոռոյն Երուսաղէմի, սոյն Գրիգորի ճգնազգեաց եւ դիանական բարեւնապետի, որ ի դառն եւ ի դժնեայ ժամանակիս փայլի բարի կենցաղավարութեամբ իրրեւ զարեգակն ի մէջ հաւատացելոց: Զի թէպէտ սրբազան վեհն վաղ հեռէ ունէր ի մօր զշինումն եւ զվերայնորոգումն բարձրաերձ պարսպին, սակայն ազգի ազգի նեղութիւն թէ ի տաճկոց եւ թէ յայլասեռ քրիստոնէից, միայն ԱՃ. զիտէ, նաեւ տեսողացն յայտնի է: Եւ յետ երկու աւուրց քաղաքիս մուսուլլիմն, դատաւորն եւ շէխներն ժողովեցան ի դուռն Սր. Սաւկոբայ, Քէֆշ արարին. ի սեղանատան կամարէն մինչեւ ցեղիազար կաթողիկոսի նոր չէնքն, կ'անջրուն տեղ. այս երկուսն սուլթան եւ բարձրութիւն կանքուռն, եւ սեղանատան վերայի լիւան. եւ Գ գեղեցիկ խուց հագեալ տանիսն. սոքա հետ պարսպին Քէֆշ եղան եւ նորոք շինեցան, զոր սրբազան վեհն ի վաղուց հեռէ զշինութիւն սոցա ունէր ի մօր, եւ ցանկայր թէ երբ լինիլոց եւ այս, որ ես տալոց զսոցա շինութիւն տեսնէի, վասնորոյ իւր ձեռօքն շինեաց, եւ հասա իւր փառաքանացն:

Զի այս ին ամ է որ նստեալ է աթոռ պատրիարքութեան եւ տեղապահ Սաւկոբայ

Առաքելոյն Տեառնեղբորն, բազում բարեաց Սրբոյ Տանն պատճառ եղև, եթէ զեճ քիսայ պարտուց վճարումն, և զՍբ. Յառութեան վերնատանն սխենն բառնալոյ, և զսուրբ խորանն պայծառացուցանելոյ, և զսուրբ խցերն փայտակերտ նորոգ շինելոյ, յայտնի է տեսողացդ:

Այլ և Սրբոյ Աթոռոյս յարեկեան կողմն ոչ գոյր պարիսպ, վասնդի մինչև ի ցորենատունն քաղաքացիքն բնակէին. վասնորոյ էառ զՄիմարենց տներն, և այս ոչ սակաւ դրամով, և շրջապատեալ նորապէս պարսպաւ, և ամրացոյց զՍբ. Աթոռս յամ. կողմանց:

Նաև զմեծ եկեղեցւոյ վերստին ծնւպելն, և ազգի ազգի պատկերօք և շինիով շրջապատեալ պայծառացուցանելն, յայտնի է տեսողացն. թողում և զանթիւ անօթքն Սբ. Եկեղեցւոյն, եթէ սակեղէնքն և արծաթեղէնք և դիպակեղէնք որոյ ոչ գոյ թիւ:

Նաև և զՍբ. Թէոփորոս Եկեղեցւոյ հիմամբ նորակերտ շինելն, որ յառաջ ի ոգի հազիւ առնոյր, վասնորոյ լայն և ընդարձակ շինեաց գեղեցիկ և պայծառ օրինուածովք, և զինչ է զոր ասեմ, գրէթէ աղինասարաս դրախտ դարձոյց զՍբ. Տունս:

Բանդի զլիակատար պատմութիւն Սրբազանին իմոյ արարեալ է կեսորացի Յովհաննէս աստուածաբան վարդապետն, ըստ գերակատար իմաստութեան իւրում, մեք դարձցուք ի յոճ բանիս մերոյ:

Վասնորոյ իբրև սկսան շինել զպարիսպն, յամ. ուստեք նեղութիւն շրջապատեաց զմից, մանաւանդ ի բնակից քաղաքիս, որ իբրև զտղուկ զարիւնն ծածն և անկուշտ մնան. ի մեծամեծաց մինչև ցփռուսն պահանջէին զգրամն, և առնելով ոչ լիանային:

Եւ այսմ ամի Սրբազան վեհն իմ հարկ եղ ի վերայ իմ գնալ ի Բիւզանդոպոլմութիւն հաւաքելոյ, վասն շինութեան պարսպին: Եւ աս յօմար կամօք յանձս տուի, և գնացի, և պարտիարք տեղւոյն Յակոբ աստուածաբան վարդապետն սիրով ընկալաւ, և գեր քան զարժանն մեր մեծարեաց և պատուեաց ըստ անարգամեծար բարուց իւրում: Եւ յետ

չորից ամսոց դարձաք ի Սբ. Աթոռս, Բժ և Լ ուխտաւորօք: Թէպէտ ոչ եղև որպէս կործնաք, սակայն զատարիկ ոչ ելանք. զի որ ի փոքուն հաւատարիմ, և այլն:

Թվին ՌՃՂԲ, Մշու Սբ. Կարապետու յառաջնորդ Մինաս աստուածաբան վարդապետն եկն ի Սբ. Գաղաքս Երուսաղէմ յուխտ և երկրպագութիւն Սբ. Տնօրինական Տեղեաց Գի. Աստուծոյն մերոյ. բոլոր ամ մի մնաց ի Սբ. Աթոռս, և Սրբաբազան վեհն յոյժ պատուեաց և մեծարեաց զինքն, և ինքն եկաւ աստուած գնաց ի Թագաւորանիստ քաղաքն Կոստանդնուպօլիս, վասն իւրոյ պիտոյիցն:

Թվին ՌՃՂԳին, ի Սբ. Տօնի Մընընդեանն Գի. ի Սբ. Մնուէղն գնացաք հանդերձ ուխտաւորօքն, անհանգիստ մնացաք ևս և սիրազուն եղբայրն իմ ըստ հոգւոյ կեսորացի Յովհաննէս վարդապետն, վասն ոչ գիտանելոյ իջևան. և վասն սաստիկ ձմերանն յամեցաք անդր սակաւ ինչ աւուրս. և ապա եկաւ ուրախութեամբ եկաք ի Սբ. Աթոռս: Եւ էր ընդ մեզ վերոյ յիշեցեալ Մինաս վարդապետն, և մեր Ուսումնելու նաւիրակ Ղազար վարդապետն. նաև աստուածատէր իշխանքն՝ Ակնցի մահեսի Գրիգորն, և Կեսարացի մահեսի Պալին, և այլք բազումք, զորս թողաք յիշելոյ:

Այսմ թվոյ մեծ պահոցն, Կեսարու առաջնորդ Աւետիք վարդապետն եկն ի Սբ. Գաղաքս, շատ դրամ կործնաք տայր Սբ. Աթոռոյս, ի դերն ելաւ: Իսկ Սրբազան վեհն պատուով ուղարկեաց իւր աթոռն Կեսարիոյ:

Այսմ ամի յետ Զատիկն օրնեալ ուխտաւորքն խաղաղութեամբ իջին Յեսայֆոյ, և ապա գնացեալ իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց: Ընէիլ տեղւոյն Սիմէոն վարդապետն գրեալ էր Սրբազան վեհին թէ ձկ զուշ խարճեցի ի գալ ուխտաւորացն աստ, և այս ոչ երբէք եղեալ էր թէ Եսայֆոյս նստող Ռէիլն դրամ խարճէ և Սբ. Տանն մեծաւորէն պահանջէ: Եւ թէպէտ ամ. տարի պատահի, սակայն Յեսայֆոյ նստող Ռէիլն ինքն զինքն երկու սպասաւորօքն կու պահէ:

Այսմ ամի յետ Զատիկն Սեբաստացի մահեսի Յեսայիկ հիւանդացաւ, և ոչ

կարող գնալ ընդ ուխտաւորացն, այլ մնալ մինչ ի Համբարձման Տօնին Քիւրաւ առողջութիւնն գտաւ անձին, և ապա ելեալ գնաց ուրախ սրտիւ։ Սա շինել ետուր զերկաթեայ գեղեցիկ դասերու յանլիքն, յիշատակ իւր և ծնողաց իւրոց։ զի էր այր խօհեմ և մեծահաւատ։

Այսմ յամի յետ գնալու ուխտաւորաց զմեծ դռան դիմացի պարտէզն Սրբազան վեհն մեծացոյց ներակերտ պարտաւալ շըրջապատեալ։ Թէպէտ յառաջ գոյր, սակայն փոքր, և պարիսպն չոր քարամբ շարեալ ցած, և այն ևս խաղտեալ։ Վասնորոյ իրրե զգրախաղ դարձոյց, և ետ մեղաւորիտ իրր ընծայ, կամ ի զբոսանս, վասն որտարացութեանն։ Նա և զլիճոնի պաղջլան զառաջիկն որ հնացեալ էր, նոր շինեաց և ամբարձրաց պարտաւալ։ և ջրհոր մի նոր գտեալ գեղեցիկ՝ էառ ի մէջ պաղջլային, և ի յարեկեան կողմն կից պատին։

Ի մեծի Այլակերպութեան Տօնին, Սրբազան վեհն ժամարար էր, զխորհուրդ աւուր ծանոյց ըստ պատշաճի տօնին քաղցր բարբառով և լի իմաստութեամբ, և սակաւ ինչ մթուր դառնութեան արքայց քաղաքացոյ։ Աղքատ գողով ի ֆռանդաց վանքն գնալոյն վասն ընչից և ոչ հաւատայ։ Վասնորոյ, եկին առ ռոն Սրբազան վեհին անկան մեղայիւ, և դադարեցան ի մուր խորհրդոց իւրեանց։

Ի Տօնի վերափոխմանն Սրբ. Աստուածածնին, Սրբազան վեհն զվից օրն հետիոտս և բոկ տալէք ընթանալոյ ի գերեզմանն Սրբ. Աստուածածնի գնալ և գալն։ Եւ այսմ յամի ևս ընդ Սրբազանին էի, որ քարաթի աւուրն առանձին ելինք ի տեղի Համբարձմանն Քիւր։ և ի Գալիլիա, և զուխտն մեր կատարեցինք։ և ապա եկեալ ի յաթոռակալի հազարայն զկերպուրն անդ ճաշակեաց, և այս վասն յետ մնալոյն եղև՝ զի անհնոր էր Սրբազան վեհին թէ յետ մնայր ի հասարակ սեղան։ Եւ այն եթէ ուտիքն և թէ պաքն։

Թվին ՌժՂԳին, հսկոսմերքի մամոյն, յերեքարթի աւուրն, Յեաֆայու յիւրիզ Սիմէոն վարդապետէն աւետիաց գիր եկն ի Սրբ. Գաղաթս յերուսաղէմ, Սրբազան վեհին, թէ Ըստամպոլու օրհնեալ տէրու նախն ուխտաւորացն ողջ և առողջ և ան-

ձեռն առա ի նաւահանգիստն Յոպպէ ժամանեցին, և մեծ քարախաթիւն եղև Սրբազան վեհին, նաև բոլոր ժիւրանից Սրբոյ և Մեծի Աթոռոյս։ և այս վասն այն, նախ զի Սրբոյ Տօնն շինութիւն և պայծառութիւն յետ Աստուծոյ նօթօք է։ Եւ երկրորդ զի այսմ ամի ի վերայ այլ ամացն, Ստամպոլու յառաջ ելեալ էին, և յետ մնացին։ զոր և հարցեալ վերահասու եղաք, որ Խն օր ի վերայ ծովու մնացեալ են, և վերակացոյ նաւին ի կարգեալ, պատրիարք Յակոբ վարդապետի սիրազուն ուղակերտ կարապետ վարդապետն։

Եւ յետ սուղ աւուրց եկն Ակնայ երկրէն նուիրակ կարապետ վարդապետն, որ էր ուղակերտ Թեղոորոս վարդապետին Խորենացոյ, իւր ժրջան աշխատութեանն բազում օրայիւք, և պարզերեսութեամբ, և Սրբազան վեհն տեսեալ զքաղութիւն և զհարազատութիւն՝ զեր քան զինքն յառաջ գնացողքն բազում արգիւնս զոր բերեալ հասոյց ի Ս. Աթոռս և ի ձեռն Սրբազան վեհին։ Վասն որոյ մեծաւ սիրով և շնորհակալութեամբ զինքն օրհնեաց, զոր Տէր պահեսցէ ընդ երկար կենօք, Ամէն։

Թվին ՌժՂԴ, ի մեծի տօնի աւուր Ծննդեան Տիտան մերոյ Յիւր. ոչ հարացաք զնալ ուխտ և երկրպագութիւն ի Բեթղէնէմ, որպէս էր սովորութիւն ամի ամի այսմ տօնի Սրբազան վեհն հանդերձ քաղմախուռն ուխտաւորօք մեծաւ փոփականօք և բաղձնօք անարգել գնայր, և այսմ ամի որբեկման պատճառն էր այս, զի այլազգիկ և ֆլահք տեղւոյն մեծ խոռվութիւն և աղմուկն ունէին հետ միմեանց։ Եւ թէպէտ ի նոյն օրն ոչ կարողացաք գնալ, սակայն յետ յերկուց ելեալ Սրբազան վեհն մեծաւ հանդիսիւ գնացաք որպէս օրէն էր յառաջագոյն, և զուխտն մեր կատարեցաք, և անձեռն յետս չսքալ ի Սրբ. Աթոռս, թէպէտ խորհ և մտարու շատ եղև։

Այսմ թուոյն, Բուն Բարեկենդանի աւուրն, զի չօգի ուխտաւոր եկին Հալապու կողմանէ, յոյժ արգիւնաւոր էին, և առատ ի տալն զողորմութիւն։ Ի Ջապին կեսարացի Ղազար վարդապետն գնաց նուիրակ ի կեսարայ քաղաքս։ որպէս է սովորութիւն Սրբոյ և Մեծի Աթոռոյս

գի Գ տարին մի անգամ հյանձնե նուիրութեան թիւը Սրբ. Տանէս տա ի հաւաքել զոգորմութիւն տասնութամէր հաւատացելոց և բերել ի Սրբ. Քաղաքս յԵրուսաղէմ, և ի Սրբ. Աթոռս: Նաև Պրոխորոսն Վարդապետն նուիրակ գնաց իզմիր քաղաքն, որ է այր ծեր և վաղեմի միաբան Սրբոյ Տանս, խախտելով ի հաւատայն և թիւերով ի ճշմարիտ ճանապարհէն, առցէ Տէր դարձ կամ բարձ: Եւ զմեր որդի կարապետ Վարդապետն կարգեաց Սրբազան Վեհն գնալ ի Բիւզանդ հետ ուխտաւորացն:

Այսմ պատեհին այնմ աւուր որունմ օրհնեալ տէրունական ուխտաւորքն հլեալ ի Սրբ. Տանէս և չուէին ի նաւահանգիստն Յոպպէ, գիր հին ի Պօլսոյն ի Յակոբ պատրիարք վարդապետէն, յորում գրեալ էր թէ Խալաթիացի աւագ երէց տէր Սահակն զվաղճանն ընկալեալ, որոյ հոգւոյն Տէրն ողորմեցի: Գի էր այր քաջ և արի յամ. գործս բարեաց, մանաւանդ թէ պիտանի Սրբոց Աթոռոց և վանօրէից և եկեղեցեաց, յորոց շնորհիւն Տէր Քս. իւրն ողորմեցի ըստ մեծի ողորմութեան իւրում, և հանգուցէ գնդգի նորա ի դասս արքոց իւրոց, Ամէն:

Յետ գնալու ուխտաւորացն Յոպպէու, թէրջիման Պողոսն յետս չաղաւ ի գործոյն վասն մարտութեան իւրոյ անձին, զի այս Ժ և Ե ամ է որ ի մէջ այս գործոյն է, որոյ Տէր զվարձս բարեաց վարդեհէ, ամէն: Եւ ի անդին նորա եղաւ դանապան Ալֆարն, հին միաբան և ծեր, գիտակ հլից և մօրց, յայտից և անյայտից, որոյ Տէր կարողութիւն տացէ:

Յետ քանի աւուրց նոր մուգավալի հին տաճարին, աւնելով ընդ ինքեան ֆարման վասն Աղնայուրի պաղջային, իբր թէ վաղուֆ է տաճարին: Վասնորոյ մեր գործակալք առին զիստիֆայի թամասուկան և գնացին. յետ շատ խօսից և վիճարանութեան եմ զը: հետուն և զֆարմանն ի ձեռացն առին: Եւ այս քանի անգամ եղև այս դաւիս: Տէր այց առնու Սրբ. Աթոռոյս. Ամէն:

Յետ այսորիկ հին դատաւոր մի, որ էր յոյժ չար և դժնեայ, ներհակ և ատեցող քրիստոնէից, և հակառակ վանօրէից. քաղաքաւ Դամասկացի, ինքն անիրաւ և

դատաստանն թիւր, աչքն ի կաշառն և ի առնուել, վասնորոյ և քաղաքացիքն տեսին թէ սուա խօսիցն ունկնդիր է և կաշառառու, և իրուեսնք ոչ ունի ի դատաստանն: Վասնորոյ քաղաքիս այլադգիքն յարեան ի վերայ վանօրէից և սու(ս)տ արգունալով լցին զդատարան: Եւ դատաւորն ըստ անրարի բարուցն չարութեանն իւրոյ և ագահութեանն յոյժ նեղեաց և տառապեցոյց զվանօրայքն: Վասնորոյ յաղաքս օտտարի նեղութեան վշտաց, և կեղեքանաց դատաւորին, ոչ կարացին տանիլ: Գ վանքի գլխաւորքն խորհուրդ արարին և մէկ մէկ մարդ գործ յղեցին ի կայսերական քաղաքն Պօլիս, հակառակորդ ամոյս հնդին, պատկեր աւուրն հինգչարաթի:

Գ մեծի ատնի վերացման կենսատու Սրբ. Խաչին Սրբազան Վեհն զՔս. պատարագեաց, և յետ Սրբոյ Պատարագին զբաւոր մեր աղին քրիստոնեայքն կերակրեաց: Վանդի յոյժ սղութիւն էր հացի, և ոչ գտանիւր երկիրս ցարեան, և եթէ քայր ի հեռատանէ ցարեան՝ զայն մեծամեծք կաւ յափշտակէին. իսկ աղքատքն և անանկք մնային ողորմելի: Վասնորոյ Սրբազան Վեհն, կարի աղքատ[ե]սէր և, ողորմած գոլով, միշտ առնէր զողորմութիւն կարատելոց, յայտնի և ծածուկք, աւ ընտանիսն և օտարս, ըստմանութեան Յորայ և հօրն հաւատոյ Աբրահամու:

Յաղաքս որոյ յետ կերակրելոյ զաղքատսն, միջօրիկայ ժամու կիրակէի աւուրն, կոչեաց զբաւոր միաբանքն Սրբոյ և Մեծի Աթոռոյս, զկարկաւորքն և ըզքեմաղեաց մանաթիքն. և ելեալ չաւացաւ ի Սրբ. Փրկչայ վանքն և անդանօր սկսաւ խրատ տալոյ, եթէ գործակալաց Սրբոյ Տանս և եթէ հասարակ միաբանից, ըստ աստիճանի և ըստ պատուոյ, յաղաքս բարեկեցութեան ինքեանց և կարգաւորութեան Սրբ. Աթոռոյս:

Ապա յետ այնորիկ զգրեգորման սուրբ պատրիարքաց և վարդապետաց, որ անդր կան հանգուցեալ, օրհնել հետուր, և ինքն Սրբազան Վեհն իւր օրհնելով ձեռքն մէկ մէկ ասկի կարգաւորաց և ԲԲ զը: հասարակ միաբանից բախեաց զողորմութիւն, և ամենեքեան միաբան շնորհակալ և գո-

հաջողք եղան սրտի մտքը, և դարձաք ի վանքո՞ւ. եւ դարձեալ եթէ զաղքատքն կերակրելոյ և թէ զոգորմութիւն բռնիւն, ոչ թէ յարգեանց Սրբոյ Աթոռոյն էր, այլ իւր ժամուէն, զոր ի ժամ պատարագ մատուցանելոյ յիշէք տուեալ էին իւրն. զոր Տէր ԱՃ. ի փառս իւր համարեացի, և զվարձս բարեաց պարգեհեացէ իւր, աստ և ի հանդերձեալ կեանսն, Ամէն:

ԹՎին ՌՃՂԴ, սեպտեմբերի ամսոյն ի և Թ, պատկեր աւուր կիրակէի, որ էր Տօն Վարագայ Երեման կենսատու Սր. Խաչիկ, յորում աւուր Սրբազան Վեհն մեծաւ հանդիսիւ զԳԽ. պատարագեաց, Սր. Խաչիկ խորանն ի բարձրաւանդակ տեղւոջն, առ ի հաշուութիւն աշխտոյի, ի քառութիւն և ի թողութիւն մեղաց մեռոց և ամ. հաւատացելոց:

Վասնորոյ երրորդ ժամու գիր եկն Յուպպու յաէիդ Սիմէոն Վարդապետէն: Նսե հետ ուխտաւորաց վերակացու լինող կարապետ Վարդապետէն թէ Աստուծով Ըստամպոլոյ օրհնեալ ուխտաւորաց նաւն անփնաս, ուրախութեամբ ի ԺԻ օրն ժամանեաց աստ ի նաւահանգիստն Յուպպէ. և մեր լուեալ ուրախացաք յաւախութիւն մեծ, և միտքան միով բերանով գոհացաք զԱստուծոյ և զբարերարութենէ նորին:

ԹՎին ՌՃՂԴ, պետն Դամասկոսի եկն ի Սր. Գաղաքս Երուսաղէմ. որպէս է սովորութիւն անդր նստող փաշայքն տարին մի անգամ դուր ելանեն և շրջեն ամ. տեղի տէրութեան իւրոյն: Վասնորոյ այսմ տարւոջն էր Շամայ պետ Այստամոզլի Ասափ փաշան, կնատ և ագահ, տեղւոյս վերու գրեալ դժնեայ և հար դատաւորն՝ ի ծածուկ մատնեաց փաշային զԳ վանքն օ. օ. վասնորոյ գրեթէ ոչ սակաւ նեղու-

թիւն կրեաց Սրբազան Վեհն և դրամէ թաքեցաւ: Քանզի այս մօտակայ տարիքս եկող փաշայքն յամէն վանաց Գ հաղարակոն զոչ. դրամ կու առնու ինքն, և քէհեայն հինգ հարիւրական, հինգ հարիւր աւելի առաջակայ արանց և մեծամեծաց ներս և դուրս կու գնայ, թողում զշուխայն որ ԴՃ հարիւրական կոնքուն գնայ. և ի վերայ այսր ամենայնի ՌԻ զոչ. ի ընծայ տունին առաջի իւրն. և եթէ սակաւ ինչ սղտլանք որ գտանի՝ ի վերայ վանօրէից, անսորմ ճշտիւ զխնդրեալն հարկիւ կու պահանջէ. և այսպէս յամ. յամի զայս խղճութիւնս կու կրնիք, զոր Տէր Աստուծոն ամենայնի ազատութիւն տացէ, ամէն:

ԹՎին ՌՃՂԴ, հոկտեմբերի ամսոյն ԺԴին, յաւուր երկուշաբաթ, Ըստամպոլու օրհնեալ տէրուական ուխտաւորքն անփնաս ուրախ սրտիւ ի Սր. Գաղաքս յերուսաղէմ հասին, որք էին թաւով ԲՃՀ հոգի, և զխաւոր ի մէջ նոցա էր յօրհնեալն Աստուծոյ և ամ. սրբոց նորո Ակնայ երկրէն մահաեսի Պետրոսն, որ առաւ և անթերի զիւր ողորմութիւն ուրախ սրտիւ պարգեհեաց Սրբոյ և Մեծի Աթոռոյն, որ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Բրիտանոյ զանճառ և զանսպառ ողորմութիւն գտցէ, ամէն:

Ի Տօնի Խաչգիւտի, որ է մարերի Ժ, արեւելցի մահաեսի Մովսէսն զՍր. Յարութեան դուռն բանալ ետուր, Սրբազան Վեհն զԳԽ. պատարագեաց մեծաւ հանդիսիւ, ի խորանն Սր. Լուսաւարչին, և յետ Սրբոյ Պատարագին քալոր ուխտաւորքն և քաղաքիս աղքատքն ի Սր. Աթոռս կերակրեցան. զոր Տէր ԱՃ. միշտ ի շէն և պայծառ պահէ զՍր. Տուեն, ամէն:

Ձեռ. Ս. Բ. Թ. 3694, էջ 23-45

Հրատ. Ն. Ա/Գ. ԾՈՎԱԿԱՆ

